

քիչ մը անդին կառք մը կը տեսնե՞ւ՝ որուն լուծը տեսակ տեսակ չներ կը քաշեն. մէջը մեծ սեղանաւոր մը նստած, աջ ու ձախ շաբարեղէն կը ցրուէ, որ 400,000 ֆր. աժող քսակի մը միջէն կը վերցնէ: Զախ զին սեսմորթ կին մը թղթէ շինած ձի մը զսպելու կ'աշխատի, որուն վրայ ժապավինազգեստ ծառայ մը հեծած է: Սակայն ժողովուրդը երթալով կը խոնի. տեղի, տեղի, կը կանչեն. մէկ դի կեցէք, ահա թագաւոր մը իր թագուհւոյն հետ յառաջ կը մատչի ճոխ դրոշուք, որուն ամենայն ոք ծափահարութիւն կ'ընէ, մինչդեռ անոնք կանկ կ'առնուն զժողովուրդը դիտելու: Կարուս թին ատենուան ասպետներ ձեռքերնին երկայն ձողեր բըռնած են. ձողին ծայրը քսակ մը կայ հաստատած՝ որուն մէջ պատուհանաց հանդիսականները բարերարութեն զրամիկ մը կը ձգեն. և այս զրամիկը օրուան վերջը բաւական գումարիկ մը կը ձեացը նէ, որ հիւանդաց և աղքատաց օգնութեան կը զործածուի:

Այսօր ամենայն ինչ զուարճութիւն է. զիմակը, խեղկատակը և միմուգը Մայր եկեղեցւոյն շքեղութիւններն մոռցընել կու տան, ուր կը բովանդակին Ռուպէնսի մեծամեծ գործերը: Բայց համբերեցէք. վաղը նորէն քարոզչին ձայնը ամպիոնէն պիտոր հնչէ:

### ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԱՐԻՈՔ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ (Տես երես 59)

Նոյն ժամանակը բարեբախտաբար երկու զիմամարտ քամիներէն մէկը միւսոյն յաղթելով՝ ամպերը ցրուեցան և ալիք կանոնաւոր ընթացք մը առին: Ենք ձկնորսին հոգն ու մտմտուքը փարատելով՝ քաջութեամբնաւակը յառաջ կը վարէք. վերջապէս քիչ կը մնար լճափին հասնելու: Որպէս զի կարենան ամենքը անվնաս նաւակէն գուրս ելլալ, նախախնամութիւնը զայն ալ առաջուց

հոգացեր էր. ապա թէ ոչ շատ վտանգաւոր բան է ցամաք մօտենալը՝ երբ ալիք եղերքին վրայ կը խորտակին, մերթ ժայ ոերուն վրայ մերթ յետս մղմամբ: Խումբ մը ձկնորսաց շատոնց 'ի վեր ժայուի մը քովլ կը սպասէին եկիտիումին, ձեռքերնին մէյ մէկ երկայն ձուղերով երկաթէ ճանկեր բռնած, զորնք իսկոյննետելով քաշեցին զայն ցամաք կատաղի ալեաց միջէն: Ամենքն ալ վարժապետէն զատ գուրս ելան, և միաբան ծունկ չոքած փառք տուին Աստուծոյ. յետոյ նորհակալ ըլլալով առատապէս վարձատրեցին իրենց աղատիչները: Ձկնորսք, զեռ հիմա տեսնալով վարժապետը՝ որ զգայութենէն զիրկ չէր իւմացած աղատութիւննին, առանց ցաւակից ըլլալու վրան գուրս հանեցին զանիկայ. խեղճը շատ ժամանակի կարօտէր քիչ մը զգաստանալով կանգուն կենալու. վասն զի երկիւղը ոչ միայն մտաց ու սրտին՝ այլ բոլոր անդամնցը վրայ տիրեր էր: Եկիտիու խնդրեց քիչ մը սպասեն, որ լիճը ալէկոծութենէն աղէկ մը հանդարտի, որպէս զի ետքը նորէն նաւակովը իր տանը առջև տանի: Բոլորն ալ հաւանեցան ծերոյն բաց 'ի վարժապետէն, որ միտքը հաստատուն զրեր էր մէյ մըն ալ լճին վրայէն չանցնելու, թէ և աշխարհիս բովանդակ գանձը իրեն պարզեն. և լիճը ցուցընելով կ'ըսէր.

— Այսպիսի ահաւոր և անտանելի տանջանք քաշելէն վերջը, հրէին այն առակը վրաս շատ տպաւորութիւն ըրաւ, թէ « ջուրը գերան չունի »:

— Բայց դու աղէկ քրիստոնեայ մը կ'երևիս ինձի, կ'ըսէր քահանայն ծիծաղելով:

— Այս, իբրև քրիստոնեայ պէտք չէ որ զԱստուած փորձեմ:

— Լճիս վրայ ճամբայ ընելովդ զԱստուած փորձող չես ըլլար, սրտիդ երկիւղը քեզի այդպէս կարծել կու տայ. վասն զի այս լիճը սոյն կողմի բնակչաց ամենօրեայ անցուղարձի ճամբայ է: Յետոյ զանիկայ մէկդի տանելով ուրիշներէն ծածուկ այսպէսկը յանդիմանէր. Այսօր ճանր մեղանչեցիր Աստուծոյ

վրայ անվտահութեամբդ . հեթանոսի մը կերպ ցըցուցիր՝ որ չիհաւտար անմահութեան, և մարմնոյն մահը քան զամեն թշուառութիւն մեծ կը համարի : Նոյնպէս աշակերտացդ ալ շատ գէշ օրինակ տուիր . ասկէ ետքը հաւատոյ վրայ ինչ վարդապետութիւն ալ ընես՝ անոնց քով յարդ ու պատիւ պիտի չիգտնայ : Օրինակի համար, եթէ ըսելու ըլլաս անոնց, թէ մարդ ամեն նեղութեան մէջ պէտք է առ Աստուած ապաւինի, արդեզք նոյն ժամանակը տրդայք պիտի չիխնտան վրադ փոթորկիս արկածը յիշելով : Դու, բարեկամ, կարող չես մէյ մըն ալ ասոնց հետ Հայր մեր մը զուրցելու . զի գործովդ չէիր վստահացըներ, թէ ամեն մարդ հայր մ'ունի երկինքը : Ով որ ուրիշը կ'ուզէ կրթել և ուսուցանել՝ ինքը նախև առաջ կրթեալ և ուսեալ պիտի ըլլայ . բայց դու այս բաներէն շատ հեռի ես, թէ և այլք տարբեր կարծիք ունենան վրադ :

Այս խրատները լսելու ատեն վարժապետին երեսաց դոյնը կը նետէր ամօթէ . իսկ կալուածատէր իշխանը մեծաւ մասամբ քահանային խօսքերուն ունկնդիր ըլլալով, վասն զի քահանայն չափազանց նախանձայութենէն ինքնիրմէ ելած բարձրաձայն կը խօսէր, կը պոռար հեռուանց՝ ծիծաղով երեսաց .

— Տէր ժողովրդապետ, հիմա 'ի բաց թող այդ խօսակցութիւնը . ամենուն բնութիւնը նոյն չէ, քաջութիւն ու երկչութիւն մարդուս հետ կը ծնանին :

— Ես այն տեսակ քաջութեան վրայ չեմ խօսիր, որ ինչ ըսել է երկիւղ բնաւ չիզիտեր և յանզուգն է պատերազմի կամ վտանգի մէջ . այլ կը խօսիմ այնպիսի քաջութեան վրայ, զոր ամեն քրիստոնեայ պարտական է ունենալու և նեղութեանց մէջ ցուցընելու . այն Աստուծուց վրայ վստահութիւնը կ'իմանամ ես, զոր այսօր տղայք անգամ իրենց սրտաշարժ աղօթքովը յայտնեցին :

— Յարգոյ տէր, տղայոց բրածը ընդհանուր կանոնի տեղ չիզօրեր, կ'ըսէր իշխանը՝ պաշտպանել ուզելով զվարժապետը . տղայք շատ անգամ վտանգին

ինչ ըլլալը լաւ չեն կրնար որոշել, և զրեթէ չունին այն բուռն երևակայութիւնը՝ որ աչքի առջև երկիւղը կարգէ դուրս նկարելով՝ կը սաստկացընէ զայն . եթէ վարժապետին երևակայութիւնն ալ այսպէս մեծ համարելու ըլլանք, անով շատ կ'արդարանայ ինքը :

— Ամեն երևակայութիւն՝ որ չիծառայեր զԱստուած և իր նախախնամութիւնը ճանաչելու՝ է անմիտ մոտածութիւն . իսկ ընդ հակառակն բարի երևակայութիւնը, զոր ունենալն ամեն ուսուցչաց կարեսոր է, որոտման և կայծակի ատեն ալ կարող է միտք բերելու զԱստուած և զմարդ իր ամենակարող ձեռքին ներքեւ ըլլալուն արթուն պահելու :

— Տէր ժողովրդապետ, թէպէտ զուրցածներդ կը յարգեմ, սակայն կը հարկադրիմ ևս զուրցելու՝ թէ միշտ չափազանց խօսիլ կը սիրես, և հակառակ ըլլալովդ վարժապետին՝ ամեն բանի մէջ պատճառ կը փնտռես անոր վրայ գէշ խօսելու . բայց այնու իմ կարծիքս երբեք չես կրնար փոխել . տղայքս անոր հետ շատ աւելի բան կ'ուսանին՝ քան այլ տամն ուսուցչաց քով . ուստի կարծիքդ միայն քեզի պահէ, ես ալ վարժապետս ինծի կը պահեմ, որուն վրայ յարգելի դրացիս շատ գոհ էր և գովեստ ալ կու տար :

Իշխանին այս բառերը արտաբերելու ատեն բոնած կերպը նախատական էր՝ քան թէ բուն խօսքերը . ալէ կոծութիւնն արդէն իսկ իր բարկութիւնը շարժեր էր, և հիմա ոտքերը ընդարձակ միջոց զտնալով՝ առթի կը սպասէր զայն դուրս թափելու, զոր միրկին կատաղութիւնը սանձեր էր : Իշխանս իր ճոխ հարստութեանը ու կալուածոցը վրայ միայն յոյսը զրած անձ մ'ըլլալով, ժողովրդապետին աչքին անարդ սեպուած էր, ուզտի անոր բրած նախատանցը ուշ չէր դներ, մանաւանդ թէ անոր վրայ ցաւելով այսպէս կ'ըսէր զուարթաբար .

— Մարդկօրէն կը սխալիս . երբ իմ բարեկամն ազնիւ իշխանը կը գովէր զանիկայ, ինքն ալ դեռ նոյն սխալման

մէջ էր . բայց կարծեմ թէ հիմա միտքը ուղղեր է : ինքը պատուական ամուսնոյն մահուանը ժամանակ , անոր դագաղին քով երդմամբ խօսք տուած ըլլալով նախ և առաջ փոյթ տանելու՝ որ իր տղային առաքինի և բարեկիրթ անձինք ընէ . անշուշտ հիմա ճամբորդութենէն անոր միտքն ալ արթընցաւ տղայոցը կրթիչն փոխելու :

Իշխանը զարմանալով այս կերպ խօսակցութեան վրայ , կը հարցընէր դրացի իշխանին հաճութիւնը , որուն բերնէն այոն լսուելով սաստիկ կրքէն բոլորին կարմիր կտրեցաւ . և կ'ուզէր բոլոր կատաղութիւնը քահանայէն առնուլ ըսելով .

— Ամեն մարդու ձեռքն է իր կամքը դործադրելու . իշխանին դրացութեանը պատճառաւ յորդորեցի զինքը մտերմական սիրով տղայոցը զաստիարակութիւնը վարժապետիս յանձնելու . բայց արդ չեմ աղաչեր երբեք իրեն՝ որ մէյ մըն ալ տունս առաքէ զանոնք : Սակայն շատ անվայել բան կը սեպեմ , որ քեզ չիվերաբերող իրին մէջ խառնուեր ես : Ես առաւելապէս տղայոց վրայ կը ցաւիմ , որ ուսման մէջ այնչափ յառաջացեալ ըլլալով , հիմա պիտի զրկուին անից , յետոյ անշուշտ քեզ չնորհակալ պիտի ըլլան . քեզմէ պիտի իմանան՝ որ իրենց երջանկութեանն ապականիչ ցեցը եղար :

— Այդ աշխատանքը որ զիս նախատելու համար վրադ առած ես՝ բոլորովին փուճ ու անօգուտ է , հեղաբար ու ծանրութեամբ պատախանեց քահանայն . վասն զի ամենայն ինչ՝ որ վրաս գայ՝ Աստուծոյ ձեռքէն եկած կ'ընդունիմ , և փառք կու տամ անոր : Վաղուց հետէ տղայքը քննելու ատեն վարժապետին մեծ պակասութիւնը ճանչցեր էի , և առաւօտը հետն ըրած խօսակցութենէս վերջը՝ կարծեացս վրայ հաստատեցայ՝ թէ ոչ միայն պակասաւոր է անոր տուած կրթութիւնը , այլ հիմամբ սուստ իշխանը շատ տարիներէ ի վեր իմ սերտ բարեկամն ըլլալով , կը խնդրէր որ իրեն հետ մէկտեղ տղոցը վրայ խնամք

տանիմ՝ որ քրիստոնէավայել կրթութիւն մ'առնուն . ուստի ես ալ իրաւունք կ'ունենամ հիմա գործոյն մէջ մտնալու՝ տեսնալով որ հակառակը կը գործադրի : Վարժապետը տղոցմէ հեռացնելը ՚ի վաղուց մտացս մէջ էր , բայց չէի կարծեր՝ որ այսպէս շուտ պիտի յաջողի . այս օրուան անակնկալ փոթորիկն եղաւ պատճառ անոր անարժանութեանը վերահասու ըլլալու : Դեռ ուրիշ գէշ բան մըն ալ կար , պէտք է զայն ալ յեշել , որ՝ փառք Աստուծոյ այն ալ կը վերցուի : Տղայք փոփոխակի շաբաթ մը քու տունդ՝ շաբաթ մը մըտերմիս տունը ուսմունք ընելով ասոր տղայքը մէն մի ամիս տամնուչորս անգամ կը հարկադրէին քու սեղանէդ ճաշելու . իրենց տանը սովորաբար պարզու առողջ կերակուրներէն բոլորովին տարբեր և անոնց ներհակը ուտելով : Յամեղ ու շուայլ դահամունք տղայոց շատ վնասակար են և զիրենք դեռ մանկութեան մէջ հեշտասէր ու թուլամորթընելով արիւնին կ'ապականեն : Քանի որ տղայք դեռ մատղաշ փափուկ են , պէտք է լաւ ուսանին և իրենց սեփականեն այս պանչելի սկզբունքը . Դու զքեղըստ կարելոյն ջանա գոհ ընելու , և տուր այլում առանց խնայութեան՝ որշափ ձեռքէդ կու գայ : Ուղղակի կանոնին դէմ կը գործէ անիկայ՝ որ զանոնք զեղիսութեան մասնակից կ'ընէ : Իրաւցնէ քու այդպիսի գաղափարի տէր ըլլալուդ համար , շատ կ'ուրախանամ զիրենք վնասակար հետևանքներէ հեռացնելուս : Կը տեսնաս արդ , տէր իմ , որ ես ալ ունիմ բերան քեզի դէմ խօսելու . ինչպէս որ ես անհաճոյ եմ քեզի , նոյնպէս զու ալ ինծի շատ բանի մէջ :

Իշխանը ժողովրդապետին համար ձակութեանը վրայ զայրացած՝ զինքը փարիսեցի կեղծաւոր կոչելով կերդուընար բոլոր ծանօթներուն պատմելու այդ խորամանկ խաբէութիւնը՝ զոր գործեց իրեն :

— Որչափ ստախօսութեամբ բամբաս ալ զիս , ըսաւ քահանայն , դոհու-

թիւն Աստուծոյ, անով պատուցոս չես կրնար վնաս մը տալ, բայց թերեւս դիւրահաւան միտքերը խարես. սակայն գիտնաս՝ որ նոյն ատենը զիս ալ կը ստիպես հասկըցնելու անոնց, թէ արժանի չէ հաւատք ընծայել այն մարդուն՝ որ յայտնի գողի մը նպաստելով անոր ձեռքը գովութեան վկայագիր մը տուեր է իր ստորագրութեամբ ու կնքով հաւատարմացնելով. ուստի գող մը գովողին նախատինքը ինծի մեծ պատիւ է:

Քահանայն այսպէս զուրցելէն ետքը դառնալով պատուիրեց Եկիտիումին՝ որ նաւակը պատրաստէ ջուրը հանգարտած ըլլալով: Ենթուկը՝ որ քիչ մը հեռու տղայոց մօտ կեցեր էր՝ որոնք ձկնորսաց կը պատմէին լճին մէջ անցուցած փորձանքնին, եկաւ մինչև կէուը աւազի մէջ խրած նաւակը ջրոյն վրայ բերաւ: Մտերիմ իշխանը սրտէն շատ նեղացած ըլլալով դրացւոյն՝ որ այնպէս անվայել կոպտութեամբ վարուեր էր քահանային հետ, պաղութեամբ մը ըստ անոր.

— Հրացանը ու պայուսակը այսօր Եկիտիոսին ձեռքը կը դարձընեմ քեզի. վասն զի վարժապետդ հաստատուն միտքը դրեր է ջրոյ վրայ ոտք չիկոխելու. Խոկ դու՝ ինչպէս տաք պաշտպանութեամբդ յայտնեցիր՝ չես ուզեր բաժանիլ իրմէն. ուստի ես ալ չեմ յուսարկել ըստ առաջուան խոստմանդ:

— Ինչու աւելորդ բեռն ըլլայ Եկիտիոսի. եթէ չուզէր դարձեալ որսալ ճամբան, թող վարժապետին յանձնէ զանոնք:

— Ինչպէս որ կը հաճիս, ըսելով քահանային բարեկամը՝ ուսէն վար առաւ հրացանը, ու պայուսակին հետ ծառի մը տակ զետեղեց: Յետոյ ցուրտ կերպով մը ծռելով իշխանին՝ գնաց նստաւ քահանային քով՝ որ արդէն Մորիցին ու Հենրիկին հետ նաւակ մտեր էր:

Տղայք զարմացած հօրերնուն վրայ ախուր նայուածք մը կը ձգէին, չզիտնալով այսպէս արագ բաժնուենուն էութիւնը: Երբոր կալուածատիրոջ տը-

դայք ցամաքէն նաւակին հեռանալու միջոց իրենց ուսումնակից և խաղակից ընկերացը ձեռքոք բարեւ կու տային, ասդին քահանային սիրտը ցաւելով անոնց վրայ կ'ըսէր կամացուկ.

— Խեղդ տղաքներ. յետոյ բարեկամին ձեռքը բռնելով կը հարցընէր. Բարկացեր ես ինծի:

— Ի՞նչ իրաւամբ, երախտապարտ սրտով զուրցեց իշխանը, կրնամ բարկանալ այն անձին՝ որուն նպաստեցին անշունչ տարերք իսկ մարդու մը անարժանութիւնը՝ ի յայտ ածելու, որոյ ձեռքը տղիտաբար իմ անգին բարիս, իմ տղայքս հաւտացեր էի՝ զանոնք իսպառ խանգարելու համար: Նա տղայ կը թելու անձ չէ, վասն զի քրիստոնեայ չէ. հետևաբար իմ իրմէ պահանջած փափաքներս կատարելու անկարող: Ծովակին վրայի փոթորկին անոր երեսին զիմանկը վար առաւ. ասկէ ետքը կը խնդրեմ քեզմէ՝ որ այս անպիտանին վրայօք նորէն խօսք չիբանաս:

Ծիրանի գոտի մը՝ ի նշան խաղաղութեան լճին վրայ կամարածե կ'երեւար. և թոշնոց գայլայլիկը յամենուստ կը լսուէր գեղեցիկ օղը աւետելով: Իշխանին խիղճը շատ հանգիստ էր, և երբ յետ զուարճալի ու խաղաղ ճամբորդութեան մը ցամաք կ'եղային Եկիտիոսին տընակէն քիչ մը հեռու, անոր ձեռքը ոսկի մը զրաւ, որուն ձկնորսը շատ զարմանալով և երկայն ատեն հրաժարելով՝ վերջապէս քսակին մէջ նետեց: Երկու բարեկամք թեւ թեփ անցուցած տուն գնացին: Երհարտ իշխանին սիրելի ու հաւատարիմ ծառայն նոյն իրիկունը Մորիցին ու Հենրիկին լսելով, որ մէյ մըն ալ զրացի իշխանին տունը պիտի չերթան և վարժապետն ալ իր դասատուութենէն պիտի դադրի, սրտին ցնծութենէն ընչացքը կ'ոլորէր. զի ինքն ալ քահանային կարծեաց վրայ էր: Տղայոց երեսը փոխանակ տըտմութեան՝ անուշ խնտում մը կը փայլէր ուրիշ ուսուցչի փափաքէն, միրկին արկածը սըրտերնուն մէջ պաղեցուցած ըլլալով առաջնոյն սէրը ու յարգութիւնը:

**Երբ ճշմարտութիւն ներկայանայ, ա-**  
**մեն ստութիւն ու կեղծիք իրենց յա-**  
**տուկ գոյնը կ'առնուն։ Այս վճռական**  
**իրաւացի խօսքը ճշդիւ 'ի գործ դրուե-**  
**ցաւ ալէկոծութեան ատեն։**

Կը շարունակուի։

## ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Լեարդը

(Տես Երես 35)

**Միթէ քիչ մը չե՞նք ձանձրանար,**  
**սիրելի օրիորդիկ, այնչափ ատեն այդ**  
**գարշ աղեաց խողովակին քով մնալով,**  
**ուր այն ամենայն բան՝ որ պնակին մէջ**  
**անանկ զեղեցիկ երևոյթ ունէր՝ ալ չեն**  
**ճանչցուիր, և որուն մէջ ալ ուրիշ բան**  
**խնդրելու չէ, եթէ ոչ խախաց, մաղձ և**  
**պանկրէաս, այնպիսի բաներ՝ որ աչքի**  
**ամենսին ախորժելի չեն, այլ և ոչ իսկ**  
**ականջի։**

**Ի՞նչ կ'ուզես. այսպիսի է այն ամեն**  
**բանի պատմութիւնը՝ որ օգտակարու-**  
**թիւն մ'ունի։ Այն մարդիկը՝ որ այս աշ-**  
**խարհիս վրայ քեզ կ'ապրեցնեն՝ միշտ**  
**ամենէն աղուորներն չեն, և այն պղտի**  
**աշխարհին նկատմամբ՝ որ ներսի զիդ**  
**կը կրես, նմանապէս նոյն բանը ըսե-**  
**լու է։**

**Սակայն, դեռ քիչ մը սիրո ըրէ,**  
**վերջը կը մօտենանք։ Քիչ ատենէ տես-**  
**նենք պիտոր ուտելեաց սննդարար մա-**  
**սը, որ քաշելով դէպ արիւն կ'երթայ**  
**հետը խառնուելու, ուր գարձեալ նոր**  
**աշխարհներ առջենիս ելլեն պիտոր։**

**Բայց նախ, լերդին վրայ խօսինք հա-**  
**մառօտ մը, որ քու մաղձդ շինողն է, և**  
**առաջ անոր բռնած տեղը զննենք։**

**Մեր մարմնոյն ներսի դին երկու մեծ**  
**բաժանմունք կայ, որ ինչպէս երկու դըս-**

**տիկոն՝ մէկ մէկու վրայ յարմարցուած**  
**են. և են կուրծք և որովայն։ Երկու**  
**բոլորովին որոշ դստիկոն են ասոնք, ու**  
**իւրաքանչիւրն իր յատուկ վարձուորնե-**  
**րուն խումբն ունի. առջինին մէջ սիրտն**  
**ու թոքերը կը բնակին, որոնց արուեստը**  
**քիչ մը ետքը տեսնանք պիտոր. երկրոր-**  
**դին մէջ ստամոքսն և աղիքները կան՝ և**  
**ինչ որ գարձեալ ասոնց հետ մարսողու-**  
**թեան համար կ'աշխատին։ Այս երկու**  
**դստիկոնները մէկ մէկէ յատակով մը**  
**բաժնուած են՝ որ ստամոքսի փոսին քիչ**  
**մը վերովը կ'իյնայ։ Այս յատակը մեծ**  
**դնդեր մըն է, նուրբ ու տափակ, և ձիգ՝**  
**ինչպէս կտաւ մը՝ մարմնոյն բոլոր լայնու-**  
**թեամբը ձգուած է, զոր առագաստ —**  
**diaphragme — կը կոչեն։ Այս ալ նմա-**  
**նապէս դժուարին բառ մըն է, բայց**  
**փոյթ ընելու չէ. պէտք է բռնի ջանալ**  
**միտք պահել, վասն զի ատոր շատ պէտք**  
**պիտոր ունենանք՝ երբ թոքոց վրայ**  
**սկըսինք խօսիլ։ Սակայն և այնպէս ափ-**  
**սնս է՝ որ պղտի յունագէտ մը չես, որ**  
**ան ատեն ամենապարզ կու դար քեզի։**  
**Diaphragme յունարէն բաժանում ըսել**  
**է. որ նոյնը կ'ըլլար ըսել, բաժանման**  
**միջնորմը, կամ թէ ինչպէս ես քիչ մը**  
**առաջ ըսի, յատակը։**

**Այս բոլոր յառաջաբանը անոր հա-**  
**մար կ'ընեմ, որ ըսեմքեզի՝ թէ լերդը**  
**որովայնին մէջ առագաստին վրայէն**  
**հաստատուած կախուած է։ Մեծ ոմն**  
**է այդ, և ինքնիրեն մինակ իր բաժան-**  
**ման բոլոր աջակողմը լեցուցած գրաւած**  
**է, վերէն սկսեալ մինչեւ այն տեղը՝**  
**ուր կը լմնան այն ոսկորները՝ որ երկու**  
**կողմէն որովայնը կը պաշտպանեն ու**  
**սուտ կողք կը կոչուին։ Զեռքդ հոն**  
**զիր, դժուարութիւն չես քաշեր զան**  
**գտնելու։**

**Որչափ ալ մեծ է լերդը, առանց ու-**  
**րիշ բանի վրայ յարեալ ըլլալու՝ միայն**  
**առագաստին մէկ կէտին վրայ կպած է,**  
**և ամեն պղտի շարժմունքն որ կ'ընենք՝**  
**որովայնին մէջ ամենայն դիրքով կը խա-**  
**զայ։ Մասսամբ մը ասոր համար է՝ որ**  
**ընդհանրապէս ձախ կողման վրայ պառ-**  
**կիլ ախորժելի չէ այնչափ, մանաւանդ**